

սիրողդ անուելի և անվերջ յայնչումն, մինչև որ Տեսանադարձաւոյ
փողին ձայնը և յարութեան նոր գարունը՝ ծաղկի մի պէս վերըս-
տին բուսցնեն զքեզ՝ ի կոյս գերեզմանէ՝ գեղեցիկ և անթարչամ,
մինչև որ մահկանացուդ բոլորովին փոխուի յանմահութիւն և
մանկութիւնդ՝ ի զուարթութիւն անտխրական։

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՇԽԱՆՈՒՅԻ

Պոնաբարդեանց և անոնց սերտ ազգականաց կեանքն այնքան
և այնպիսի պատահարք լի է՝ որ աշխարհիս ամէն անկիւն՝ լսեց
պատմութեան վրայ գլուխ մի կրնան աւելցնել։ Այս պատճառաւ
զարմանք չէ որ ամերիկեան The Cosmopolitan վերջին հան-
գիսին մէջ՝ Ճոննէթ. Ճիլտէր տիկնոջ գրութիւնը կը գտնենք, յո-
րում սա՝ Յովսէփ Պոնաբարդին ի Պորտէնդոն անցուցած կենաց
և լիախէն Մուրատ իշխանին՝ ամերիկացի իշխանուհւոյ մը հետ
կատարած ամուսնութեան վրայ համառօտիւ կը խօսի։

Պորտէնդոն Նիւ-Ճըքսի նահանգին առան մ'է, Նիւ Եօքէն ան-
շառն հեռաւորութեամբ՝ զբօսալի բլրոյ մը վրայ, Յովսէփ Պոնա-
բարդ, եղբայր Նաբոլէոնի Ա, երբեմն թագաւոր Նէպօլէոնի և
Սպանիոյ, իրենները այս առանս փոխադրեց՝ հանդերձ բազմա-
թիւ երիտասարդ իշխանք և իշխանուհեք, ասոնց գալուստն հոգ
նշանաւոր դէպք մ'եղաւ ամերիկեան ռամկապետական և անանուն
ընկերութեան մէջ։ Այս երեսիլի պատրելոց մերձաւորներէն մին
էր Ֆրազէր հրամանատար զօրաց, որ Գէորգ թագաւորին յԱմե-
րիկա զրկած բանակին հետ էր՝ գաղթականաց ապստամբութիւ-
նը ընկճելու համար։ Ֆրազէր ի սկզբան սակաւ մի ժամանակ Հա-
րապին կարողինայի մէջ բնակեցաւ, ապա ի Հիւսիս եկաւ, և
փափաքելով ֆիլադելփիոյ մօտ ըլլալ, և միանգամայն գիւղական
կեանք ալ վայելել, ի Պորտէնդոն մեծ և հանգիստ տուն մի շինել
տուաւ, և հոն եկաւ բնակելու իր որդւոյն և դստերաց հետ։ Դրա-
տերաց մէջ կրտսերագոյնն էր կարողինայ, իսկ երիտասարդ
իշխանն լիախէն Մուրատ՝ Յովսէփ Պոնաբարդէն իբրեւ պար-
գէ ընդունած էր ընդարձակ երկիր մը՝ յորում իւր ժամանակը
կ'անցընէր։ Ձեռներէց էր, և իւր անուամբը միգեց զԱմերիկա-
ցիս, և այս ժամանակներս միտքը գրաւ ամուսնանալ ամերիկացի
օրիորդի մը հետ, և Ֆրազէրի ընտանիքն այս բանիս հաւանեցան,
բայց Յովսէփ այն աստիճանի վատացաւ՝ որ հաստատեց որ եթէ նա
այդ օրիորդին հետ ամուսնանայ՝ ոչ միայն ի ժառանգութենէ պի-

աի գրկէ, այլ նոյն իսկ վերայիշեալ երկիրն ալ ձեռքէն պիտի առնուի՝ որով կ'ապրէր և

Սակայն, ինչպէս շնոնէթ կը գրէ, իշխանը այս սպառնալիքներէն անվախ, գիշեր մը, մինչդեռ Յովսէփ հանգիստ քուն կ'ըլլար, առանէն փառաւոր ձիերով գոց կառօք դուրս կ'ելլէր և Դրէն, Դոնի ճամբան կը բռնէր և կառքը վերջապէս եպիսկոպոսական եկեղեցւոյն առջև կեցաւ։ Մուրատ իշխանն մէկէն վար իջաւ և Յուրազէր օրիորդն հետեկեցաւ իրեն։ Եկեղեցւոյն առաջնորդը արթնցուցին, որ քահանայական զեետոները հագնելով մէկէն օրհնեց զպատկն, և կարողինա եղաւ իշխանուհի Մուրատ։ Անկէ ետքը, իշխանն և իշխանուհին հանդարտութեամբ ետ դարձան և Յովսէփի պարգեւած Բրկիրին տանը մէջ հաստատեցին իրենց բնակութիւնը։ Սակայն Յովսէփ հաստատուն կեցաւ խօքին վրայ, և ոչ միայն իշխանին առաստ՝ գրաւը ետ առաւ, այլ ստիպեց ևս զինքը երկիրն ալ ետ դարձնելու, և այդ պատճառաւ մի քանի ամիս յետոյ իշխանն և իշխանուհին իրենց անդրանիկ զաւկին հետ, Յովակիմի Մուրատ իշխանին, գացին ի Պորտէնդոն իշխանուհւոյն հօրը տան մէջ բնակելու, յորում ծնան Աննա, գրաւուհի Մուշիկ, կարողինա, Շասարոնի տիկինն, և Արիլէս իշխանն։

Մուրատ իշխանն սակաւ ժամանակի մէջ իւր կնոջ օժիտն սպասեց՝ և վերջնոյս քայրն, օգնութեան հասաւ իրեն ինկած ժառանգութենէն մաս մի հանելով ասոնց, սակայն և այն լնացաւ։ Փոքրիկ Յովակիմին Գաղղիոյ ազգականաց մին գումար մի ձգեց, թէպէտ հայրը անոր ալ տիրեց։ Յրապէր մեռնելով, երկու դստերըն և կան բնակելաւ Մուրատ իշխանին հետ, որ սկսաւ ապրիլ անոնց ընչիւրք։

Վերջապէս տեսնելով իշխանուհին Մուրատ՝ որ ամէն աղբիւր ցամքեցաւ, միտքը դրաւ աղջկանց զպրոց մի բանալ ամեականով՝ որով կը յուսար իւր ընտանիքը պահել և կերակրիլ իսկ Մուրատ իշխանը գործի մը ձեռք զարնել յանձն չէր առնուր։

Մուրատ իշխանուհւոյն զպրոցը ըստ բաւականի յաղոք արգաւսիլը դնեցաւ ի սկզբան, թէպէտ, մանաւանդ յԱմերիկա, սակաւ չափաւոր՝ որ ծնողք իրենց դստերը իշխանուհւոյ մը վարժարանը ղրկեն։ Այլ գծաբախտաբար նախանձորդ գաղղիացի մը եկաւ, նոյն ճամբուն միւս կողմը զպրոց մը հաստատեց մրցելու համար և Սկաւ Մուրատ իշխանուհւոյն գաղղիերէն հնչումը պախարակել, և այլ տեսակ թերութիւններ գտնել անոր զպրոցին վրայ, և այն աստիճանի հասաւ խնդիրը որ ծնողք սկսան վախերնէն կամաց կամաց իրենց դստերը անկէ հանել։ Եւ թէպէտ գաղղիացւոյն նոյն գործն ալ շատ անյաղոք գնաց, այնպէս որ բռնադատուեցաւ գիշեր

ատեն փախչիլ որպէս զի կարենայ ազատիլ պարտատեարց ձեռքէն, սակայն Մուրատ իշխանուհւոյն գործոյն ալ մեծ վնաս հասուց, որ դպրոցը բոլորովին գոցելը լաւագոյն համարեցաւ :

Ասկէ ետքը Մուրատ իշխանուհւոյն կեանքը լի է թշուառութեամբ, շատ նեղութիւններ և վիշտեր քայեց իւր ամուսնոյն պատճառաւ, սակայն մէկու մը չյայտնեց : Միակ սփոփանք մը ելծէ ունէր՝ այս էր, Օր մը կարողինա աղջիկը հարցուց իրեն՝ Մայր, հայրս քեզի սպանիողերէն սորվեցուց, անանկ չէ՞ : — Ոչ, պատասխանեց տիկինը, հայրդ ինծի բաց ի համբերութենէ ուրիշ բան սորվեցուցած չէ : Պորտէնդոնի բնակիչներէն մին, որ ստէպ Մուրատ իշխանին հետ որսի կ'երթար, կը պատմէ՝ թէ երբոր իշխանին ընտանիքը իւր դրացիներէն հաց և այլ պէտք եղած բաները փոխ կ'առնուր, երկու փոքրիկ իշխանաց և իշխանուհեաց գլխատըր կերակուրն էր կովի մը կաթը՝ զոր իշխանուհին գնած էր յաջողութեանն ատեն : — Մոյն սա անձին գիմացն ելաւ օր մը իշխանն ձեռքերը ուրախութեամբ շփելով, և ըսաւ : Ո՛հ, բարեկամ, այսօր սքանչելի դաշինք մ'ըրի՝ կնոջս կովը փոխեցի ամենագեղեցիկ և քաջ շան մը հետ : — Ի՛նչ կ'ըսես, պատասխանեց նա, քու փոքրիկ տղաքդ ա՛նոր կաթովն միայն կ'ապրէին : իշխանը ուսերուն զարնելով՝ ըսաւ. կաթն օգտակար չէ, կ'ուզեմ միս հողայ անոնց համար : Ուստի առաւ հրացանը և շունը կանչելով գնաց դէպ ՚ի հեղեղատն՝ կարմրալան թռչուններ որսալու համար :

Եւ մինչդեռ Նախդէն Գ., — որ ՚ի Պորտէնդոն եկեր էր անգամ մը այցելելու զՅովսէփ, — Գաղղիոյ վրայ սկսեր էր տիրել, Մուրատ իշխանը միտքը դրաւ որ եթէ մէյմը անցնի ՚ի հայրենիա՝ օգուտ մի կրնար քաղել անկէ, և այսու մտածութեամբ մեկնեցաւ յԱմեւրիկայէ : Այս միջոցին Մուրատ իշխանուհւոյն և իւր որդւոց վիճակն շատ ցաւալի գիւրք մ'առաւ, և կ'ըսեն թէ մինչև սով ալ կրեր են : Կին մի, որ ցարդ ՚ի Պորտէնդոն կը բնակի, ամէն անգամ հաց եփելէն ետքը, անոնց ալ մեծ հաց մը կը զրկէր, զոր մեծաւ շնորհակալութեամբ կ'ընդունէին : Սգալից օրեր էին և այն աստիճանի մութ խաւար մը կոխած էր վրանին՝ որ կարծես թէ այգն մօտեցած էր : Ինչպէս որ քիչ ժամանակէն հանդիպեցաւ :

Վասն զի Նաբոլէոն Գի^{III} գործերն փառաւոր յաջողութիւն ունենալէն յետոյ, Մուրատ իշխանը իւր ընտանեաց և ազգականաց գրեց՝ որ փութամբ գան ՚ի Փարիզ : Հրաւերքն շատ մխիթարաւ կան էր, բայց ճամբորդութեան համար ստակ չկար : Վերջապէս Պորտէնդոնի բնակիչքն յուսալով որ ետքը ստակին ձեռք պիտի կրնան ձգել, միաբանեցան Մուրատին ընտանեաց ճամբու ծախսքը հողալ : Աւանին տիկնայքը զգեստներ շինեցին տղոց համար :

և բովանդակ աւանդ յուզման մէջ էր մտածելով՝ որ իրենցմէ մին Գաղղիոյ տան անդամ պիտի ըլլայ :

Մուրատ իշխանուհին արժանաւայել կեանք մ'անցուց 'ի Գաղղիա : Իսկ դատերաց մին, դքսուհի Մուշիի, Եւգինէ կայսրուհւոյն սերտ մտերիմներէն էր երկար ժամանակ : Քանի մը տարիէ 'ի վեր մեռաւ Մուրատ իշխանը, 'ի Լոնտրո, և կինն ալ շատ չուշացաւ երթալով զինքը գտնելու : Իրենց 'ի Պորտէնդոն ունեցած տան մէջ ամենաղքատ ընտանիքն կը բնակին հիմա, և այն աստիճան խեղճութեան մէջ են որ կը սպասեն յանկարծական յաջողութեան մը, որով իրենց բաղդն շինուի :

ՍԱՄ ՀՕՐԵՂԲՕՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Աւելորդ է բացատրել ընթերցողաց թէ ո՞վ է « հօրեղբայրն Սամ » : այնչափ ծանօթ է նոր աշխարհին ազատութեան պատմութեան մէջ . մէկ բառով կրնանք գուրցել որ յիշուի ճշգրիտ դադափար մ'էր Եանքիի՝ որդւոյ նոր Անգղիոյ, Պաղարին, սակայն լի իմաստութեամբ և շրջահայեցութեամբ, սիրող ընտանեկան կեանաց, անկախ, յարատուող, հօրեղբայրն Սամ նախ և առաջ բաղդ ունեցաւ երկրիս ամենէն աւելի ընդարձակ և ամենէն աւելի հարուստ աշխարհաց միոյն տիրապետելու :

Յետ ստանալու ընդարձակ ազատութիւն մը քաղաքական, ընկերական և կրօնական, այլ դադափար մը և նպատակ մը չունեցաւ, բայց եթէ մշակել այս երկիրը, նորա անբաւ հարստութիւնները 'ի գործ դնել և պատրաստել զայն յարմար տեղի բնակութեան մեծ և երջանիկ ժողովրդեան մը : Այս գործին վրայ կ'աշխատի հարիւր տարիէ 'ի վեր և իւր աշխատանաց և քրտանց արդիւնք, մանաւանդ յիսուն տարի է, բովանդակ աշխարհ զարմացողին :

Կարծեմ թէ կը փափագին ընթերցողք իմանալ մի առ մի այս արդիւնք և յառաջագիմութիւնք, մանաւանդ վերջին յիսուն ամաց նշանաւոր պարագայք և դէպք, որուն՝ երկրիս ոչ մի ժողովրդրդեան յառաջագիմութեան պատմութեան մէջ կրնանք հանդիպիլ :

ՔՈՂԱՔՈԿԱՆ ԿՈՋՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Երբոր ամերիկեան գաղթականութիւնք ազատեցան անգղիական տիրապետութենէ և ձեռացուցին անկախ և ազատ դաշնակցութիւն մը, այս դաշնակցութիւնը կը կազմուէր յ 13 կառավարու